

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ծառայությունների սակագները և դրույքաչափերը

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ կարևորում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ իր հաճախորդների լիարժեք տեղեկացվածությունը: Ստորև ներկայացվող Ամփոփագրում հստակ նշված են **ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ** կողմից առաջարկվող ծառայությունների սակագները, ինչպես նաև պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն, որը Ձեզ կօգնի կողմնորոշվել և կայացնել ճիշտ որոշումներ:

Ցանկացած գործարք կատարելուց կամ բանկային ծառայություն ստանալուց առաջ հանգամանորեն ծանոթացեք Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությանը, իսկ պարզաբանումների անհրաժեշտության դեպքում դիմեք մեր մասնագետներին:

Ամփոփագրի վերջին փոփոխությունը կատարվել է 02.07.2019թ.-ին:

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մասին առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ պաշտոնական կայքէջ www.araratbank.am, կամ գրել մեզ araratbank@araratbank.am էլեկտրոնային հասցեով:

Կարող եք զանգահարել նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հեռախոսային կենտրոն՝ (010) 59 23 23 շուրջօրյա հեռախոսահամարով:

- 1.** Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների և դրույքաչափերի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:
- 2.** Ծառայությունների սակագները և դրույքաչափերը (այսուհետ՝ Սակագներ) կարող են փոփոխվել Բանկի կողմից միակողմանի կարգով՝ այդ մասին նախապես ինտերնետում (բանկի պաշտոնական կայքում) կամ այլ հրապարակային աղբյուրներում, և/կամ Բանկի տարածքում՝ հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:
- 3.** Սակագները սահմանված են ՀՀ դրամով իսկ արտարժույթով գործառնությունների տոկոսով սահմանված սակագները հաշվարկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող տվյալ օրվա արժույթային շուկայում ձևավորվող միջին փոխարժեքով:
- 4.** Սույն սակագներով չսահմանված դեպքերում, գործարքների պայմանները որոշվում են առանձին պայմանագրերով կամ Բանկի այլ ներքին իրավական ակտերով:
- 5.** ԱԱՀ-ով հարկվող գործարքների սակագները ներառում են ավելացված արժեքի հարկը, ինչի վերաբերյալ սակագներում առանձին նշում է կատարված:
- 6.** Միջնորդավճարներն անվիճելի կարգով ելքագրվում են հաշվետերերի հաշիվներից, եթե այլ բան սահմանված չէ Բանկի և հաշվետիրոջ միջև կնքված պայմանագրերով:
- 7.** Առանձին դեպքերում Բանկի վարչության որոշմամբ Բանկի և հաշվետերերի միջև կնքվող պայմանագրերով կարող են սահմանվել այլ սակագներ:
- 8.** Սակագների փոփոխությունները, այդ թվում որոշակի ժամկետում այլ սակագնի կիրառումը, կատարվում են Բանկի վարչության որոշումներով:
- 9.** Բանկը պատասխանատվություն չի կրում՝
 - ա)** հաճախորդի ոչ ճիշտ ցուցումների,
 - բ)** իր տարածքից դուրս կապի միջոցների անսարքությունների,
 - գ)** անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, համաճարակներ, գործադուլներ, շրջափակումներ, ռազմական և արտակարգ դրություն, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, պետական մարմինների ակտեր և այլն) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

ԱՐԱՐԱՏՏՐԱՆՍՖԵՐ ՔԱՐՏ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը **1 ամսվա ընթացքում** արագ դրամական փոխանցումների համակարգերով **10,000 ԱՄՆ դոլարի և այլ արժույթներով համարժեք** և ավել գումարի գործարքներ իրականացրած իր հաճախորդներին առաջարկում է դառնալ **ԱՐԱՐԱՏՏՐԱՆՍՖԵՐ ակումբի անդամ**՝ տրամադրելով Classic ARARATTRANSFER բոնուսային քարտը: Այս բոնուսային քարտի միջոցով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ում արագ դրամական փոխանցումները կիրականացվեն 10% զեղչված արժեքով:

Իսկ յուրաքանչյուր տարվա **հունվարի 10-ից մինչև հունվարի 20-ն** ընկած ժամանակահատվածում ԱՐԱՐԱՏՏրանսֆեր ակումբի անդամները կդասակարգվեն ըստ Silver, Gold և Platinum խմբերի և նրանց անվճար կտրամադրվեն բոնուսային քարտեր, որոնք կտան բանկի ծառայություններից օգտվելու արտոնություններ:

- **Silver բոնուսային քարտ.** Տրամադրվում է ակումբի այն անդամներին, ովքեր ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կուտակել են մինչև 20,000 բոնուսային միավորներ, իսկ արագ դրամական փոխանցման համակարգերով կատարված գործարքների քանակը 12-ից 24 է:
- **Gold բոնուսային քարտ.** Տրամադրվում է ակումբի այն անդամներին, ովքեր ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կուտակել են 20,001-ից 40,000 բոնուսային միավորներ, իսկ արագ դրամական փոխանցման համակարգերով կատարված գործարքների քանակը 25-ից 50 է:
- **Platinum բոնուսային քարտ.** Տրամադրվում է ակումբի այն անդամներին, ում բոնուսային միավորները ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ գերազանցում են 40,000-ը, իսկ արագ դրամական փոխանցումներով իրականացրած գործարքների քանակը գերազանցում է 51-ը

ԱՐԱՐԱՏՏրանսֆեր ակումբի անդամների շրջանակում յուրաքանչյուր եռամսյակ կիրականացվեն ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ որպես մասնակից ընտրելով առավելագույն միավորներ ապահոված 5 հաճախորդներին և 5 հաճախորդ պատահականության սկզբունքով կարժանանան տարբեր պարգևների:

Ուշադրություն: Բոնուսային քարտերը ստանալուց հետո 1 տարվա ընթացքում ակումբի անդամի կողմից կատարած գործարքների շրջանակը վերը նշված պայմաններից որևէ մեկին չբավարարելու դեպքում ակումբի հետ անդամակցությունը կդադարեցվի:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱՐԱՏՏՐԱՆՍՖԵՐ ԱԿՈՒՄԲԻ SILVER ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ARARATTRANSFER SILVER անդամները կարող են օգտվել հետևյալ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ.

- «ՀԵՌԱԽՈՍՍԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳ» ծառայություն, որի շրջանակում հեռախոսագանգի միջոցով հնարավոր է օգտվել արագ դրամական փոխանցման ծառայություններից:
- Բանկային հաշիվների **անվճար** բացման և սպասարկման հնարավորություն:
- Փոքր չափսի **ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏԵՂԵՐԸ** կտրամադրվեն **ԱՆՎՃԱՐ**, իսկ միջին և մեծ չափսերի անհատական պահատեղերի համար կգործի **10%** ցածր սակագին:
- Միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերով փոխանցումները կիրականացվեն **10%** զեղչով:
- ARARATTRANSFER խմբի անդամներին կտրվի **ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**, որի պայմաններին կարող եք ծանոթանալ **ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ** ինտերնետային կայքի ֆիզիկական անձանց տրամադրվող «ՕՎԵՐԴՐԱՖՏՆԵՐ» բաժնում:
- ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆԸ մասնակցելու հնարավորություն:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱՐԱՏՏՐԱՆՍՖԵՐ ԱԿՈՒՄԲԻ GOLD ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ARARATTRANSFER Gold խմբի անդամներին կտրամադրվի **Diners Club Super Premium քարտ**՝ յուրաքանչյուր 2 տարիների համար **ԱՌԱՆՑ ՏԱՐԵԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԻ *Diners Club վճարային քարտերի շրջանակում Ձեզ կառաջարկվեն հետևյալ ծառայությունները:**

- ԿՈՆՍԻԵՐԺ ՍԵՐՎԻՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ աշխարհի ցանկացած կետում
- ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ճամփորդական, զեղծարարություններից
- ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ՝ cashback կատարված գործարքի գնի 1-2% -ի չափով
- ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ՝ առանձնահատուկ կարգավիճակ

Ապահովագրություն /Փոխհատուցման առավելագույն սահմանաչափը կազմում է 30000 Եվրո/

- **Թռիչքի և ուղեբեռի ուշացում**/4-12 ժամ ուշանալու դեպքում փոխհատուցում 1 ժամը 75 Եվրո /
- **Ապահովագրական տարածք** -ամբողջ աշխարհ
- **Ուղեբեռի կորուստ** /1000 Եվրո /
- **Ճամփորդության չկայացում** /3000 Եվրո /
- 1 պատահարի փոխհատուցման առավելագույն սահմանաչափը /10000 Եվրո /
- **Շտապ բուժօգնություն և Էվակուացիա** /30000 Եվրո /
- **Հիվանդանոցային օրական նպաստ** /1 օր 50 Եվրո /
- **Փաստաթղթերի փոխարինում** /1000 Եվրո /

- Մահ և անաշխատունակություն / 30000 Եվրո /
- Չհատուցվող գումար /չի կիրառվում/

ARARATTRANSFER GOLD խմբի անդամները կարող են օգտվել նաև հետևյալ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ.

- «ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳ» ծառայություն, որի շրջանակում հեռախոսագանգի միջոցով հնարավոր է օգտվել արագ դրամական փոխանցման ծառայություններից:
- Բանկային հաշիվների անվճար բացման և սպասարկման հնարավորություն:
- Փոքր չափսի ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏԵՂԵՐԸ կտրամադրվեն ԱՆՎՃԱՐ, իսկ միջին և մեծ չափսերի անհատական պահատեղերի համար կգործի **10%** ցածր սակագին:
- Միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերով փոխանցումները կիրականացվեն **10%** զեղչով:
- ARARATTRANSFER խմբի անդամներին կտրվի ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, որի պայմաններին կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ինտերնետային կայքի ֆիզիկական անձանց տրամադրվող «ՕՎԵՐԴՐԱՖՏՆԵՐ» բաժնում:
- ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆԸ մասնակցելու հնարավորություն:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱՐԱՏՏՐԱՆՍՖԵՐ ԱԿՈՒՄԲԻ PLATINUM ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ARARATTRANSFER Platinum խմբի անդամներին կտրամադրվի **Visa Infinite քարտ**՝ յուրաքանչյուր **2 տարիների** համար ԱՌԱՆՑ ՏԱՐԵԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԻ *:*Visa Infinite վճարային քարտերի շրջանակում Ձեզ կառաջարկվեն հետևյալ ծառայությունները:*

- **ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (GCAS)**, որը ներառում է արտակարգ իրավիճակներում գումարի կանխիկացումը արտերկրում, կորցրած/վնասված քարտի շտապ փոխարինումը նորով արտերկրում:
- **ԲԺՇԿԱԿԱՆ և ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ**. Visa Infinite քարտերի քարտապաններին և նրանց ընտանիքի անդամներին աջակցության ծառայությունները տրամադրվում են ճանապարհորդության առաջին օրից հաշված 90 օրվա ընթացքում: Քարտապանին և նրա ընտանիքի անդամներին մատուցվող անվճար բժշկական ծառայությունները ներառում են հեռախոսով բժշկական խորհրդատվությունը, բժշկական հաստատություններ ուղեգրելը, բժշկական վիճակի հետազոտումը հոսպիտալացումից առաջ և հետո (երրորդ անձանց համար բժշկական օգնությունը վճարովի է): Առաջարկվում են նաև վճարովի բժշկական ծառայություններ: Միջազգային աջակցության կենտրոնը քարտապաններին մատուցում է իրավաբանական խորհրդատվության և թարգմանչական աշխատանքների ծառայություններ ամբողջ աշխարհում (քարտապանը պետք է վճարի իրավաբանի/թարգմանչի կատարած աշխատանքի դիմաց):
- **ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ**. Վիզա Ինֆինիտ քարտով կատարված գնումները ապահովագրված են գնման օրվանից 90 օրվա ընթացքում: Եթե ապրանքը ունի այլ երաշխիքներ, այս ապահովագրությունը ծածկում է միայն այլ երաշխիքներով չփոխհատուցվող գումարները:

- **ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՃԱՍՓՈՐԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ**. Այս ծառայությունը ընդգրկում է ճանապարհորդության խափանման, հետ վերադարձի ապահովագրումը, կորցրած ուղեբեռի կամ գումարի, անգործունակության ապահովագրումը:
- **ԵՐԱՇԽԻՔԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ**. Այս ծառայությունը գործում է մեկ տարուց ավել տրված երաշխիքների համար: Այն ծածկում է վերանորոգման ծախսերը, նույն արժեքով նույն մոդելի ապրանքի հետ փոխարինման ծախսերը, եթե վերանորոգման ծախսերը գերազանցում են ապրանքի արժեքը: Վերանորոգման կամ փոխարինման անհնարինության դեպքում տրվում է ապրանքի արժեքի փոխհատուցում:
- **ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ԶԵՂՉՍՅԻՆ ՑԱՆՑ**. Քարտապանները կստանան մինչև մինչև 50% զեղչի հնարավորություն [100-ից ավելի առևտրի և սպասարկման կետերում](#): ԱՐԱՐԱՏԲԱՆԿՈՒՄ առկա Կոնսիերժ սերվիս ծառայությունը Visa Infinite քարտապաններին մատուցվում է **անվճար**:

ARARATTRANSFER Platinum խմբի անդամները կարող են օգտվել նաև հետևյալ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ.

«ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԵՆԵՁԵՐ» ծառայություն

«ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳ» ծառայություն, որի շրջանակում հեռախոսազանգի միջոցով հնարավոր է օգտվել արագ դրամական փոխանցման ծառայություններից:

Բանկային հաշիվների **անվճար** բացման և սպասարկման հնարավորություն:

Փոքր չափսի **ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏԵՂԵՐԸ** կտրամադրվեն **ԱՆՎՃԱՐ**, իսկ միջին և մեծ չափսերի անհատական պահատեղերի համար կգործի **10%** ցածր սակագին:

Միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերով փոխանցումները կիրականացվեն **10%** զեղչով:

ARARATTRANSFER խմբի անդամներին կտրվի **ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**, որի պայմաններին կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ինտերնետային կայքի ֆիզիկական անձանց տրամադրվող «ՕՎԵՐԴՐԱՖՏՆԵՐ» բաժնում:

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆԸ մասնակցելու հնարավորություն: